

ընդմանատունէն դարձին Սուլուամանաստրբի Ս. Գէորգ եկեղեցիին կից Եղիազարի շինել տուած մեծ դարպասին մէջ հողոյ ճաշ կը տրուի, որուն կը մասնակցի նաև Երեմիա :

Գրութեանս մէջ քիչ մը ընդարձակ տեղ տուինք այս խնդիրներուն այն պատճառաւ՝ որ Եղիազարի յարողներուն մէջ էին գլխաւորաբար Երեմիայի հայրը Տէր Մարտիրոս, վարժապետը՝ Տէր Յովհաննէս, հայրագիրը՝ Մահտեսի Ամբակում և նոյն ինքն Երեմիա, որ այս առթիւ պոլսահայ ազգային-եկեղեցական կեանքին վերաբերմամբ կարի շահեկան ու ցարդ անձանօթ էջեր թողած է իր Օրագրութեան մէջ :

Նախընթաց 1656 տարուան Հոկտ. 9ին Եղիազար վարդապետ մեկնած էր Կ. Պոլսէն Երուսաղէմ՝ թազաւորական հրովարտակին համաձայն կարգադրելու

դապետք ընդ նմա, և ետուն զնա ձեռնադրել և օրհնել արքեպիսկոպոս Ս. Երուսաղեմայ: Ձեռնադրութիւնը տեղի կ'ունենայ 1613 տարուան Ապրիլ 5ին, Ս. Յակոբեանց տաճարին մէջ, ըստ Աւետիս կաթողիկոսի կոնդակին (Հ. Ն. Ակինեան, Մովսէս Գ. Տարեւացի, էջ 63-67): Այդ կոնդակին մէջ Աւետիս կաթողիկոս մանրամասնաբար կը թուէ Պարոնտէրի իրաւասութիւնները և մինչև անգամ իրաւունք կը շնորհէ անոր՝ եպիսկոպոսներ ձեռնադրելու և միւռոն օրհնելու՝ եթէ ինք ուզէ, բայց բնաւ չի յիշեր Սիսի և Երուսաղէմի աթոռներուն միմեանց հետ ունեցած իրաւական յարաբերութիւնները: Եթէ կիլիկիոյ Յովհաննէս Այնթապցի կաթողիկոսը միեւնոյն ատեն պատրիարք ըլլար Երուսաղէմի և կամ ու է իրաւասութիւն ունեցած ըլլար նոյն Աթոռին վրայ՝ պէտք չէ՞ր որ ազգին մեծամեծները զայն հրաւիրէին Սիսէն, որ այնքան մօտ էր Երուսաղէմի, փոխանակ հեռաւոր Էջմիածինէն Աւետիս կաթողիկոսը կոչելու: Հանգուցեալ Տ. Բարզէն կաթողիկոս ընդունելով հանդերձ այս իրողութիւնը՝ դարձեալ իր վարկածին վրայ կը պնդէ (Անդ, էջ 210) և սակայն իր բացատրութիւնները հեռու են համոզիչ ըլլալէ: